



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

ք. Երևան, Տեղյան վտղ., 44, հին.՝ (+374 11) 518 401,  
Էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«09» 04 2021 թ.

№ 161-ՇԿ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ԳՈՒՅՔԱԶԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՇԱՏՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Անահիտ Հարությունի Սարգսյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի մարտի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի 28 շենքի հ.7 բնակարանը

հանդիսանում է քաղաքացի Անահիտ Հարութիկի Սարգսյանի սեփականությունը, ինչը պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ:

Քաղաքացի Անահիտ Հարութիկի Սարգսյանի կողմից պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի 28 շենքի հ.7 բնակարանի անշարժ գույքի հարկի վճարման 2009 թվականից մինչև 2015 թվականի, 2020 թվականը չկատարելու արդյունքում չվճարված գույքահարկի գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը կազմում է 67.583 ՀՀ դրամ, իսկ 2008 թվականից մինչև 2016 թվականի, 2020 թվականի հաշվարկված տույժը՝ 39.272 ՀՀ դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի ապրիլի 09-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու եպատակով ծանուցվել է Անահիտ Հարութիկի Սարգսյանը, սակայն չի ներկայացել:

### 3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով

հարկվող օբյեկտ են համարվում շենքեր և շինություններ, այդ թվում՝ բնակելի նշանակության շինությունները:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված՝ «լիազոր մարմին» հասկացությունը, սույն բաժնի կիրառության իմաստով, ունի հետևյալ նշանակությունը.

1/ անշարժ գույքի կադաստր վարող մարմին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող, այդ փոխադրամիջոցների պետական գրանցում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական կառավարման համապատասխան մարմին.

2/ հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը /այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը/, վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ հարկային վարչարարությունը՝ լիազոր մարմնի՝ օրենսգրքի և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողությունների ամբողջություն է՝ ուղղված հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համատարած և ճիշտ կիրառության ապահովմանը:

Նույն մասի 14-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինն է:

Օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային և լիազոր մարմինների հսկողության շրջանակներում իրականացվող վարչական վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները, եթե հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված չեն վարչական վարույթի առանձնահատկություններ:

Օրենսգրքի 447-րդ հոդված 1.1 մասի համաձայն՝ մինչև Օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը, որպես պարտադիր լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Երևան քաղաքի ավագանու 18.03.2010թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.9-Ա և հ.10-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.71-Ն որոշմամբ Երևան քաղաքում գույքահարկի գանձման

լիազորությունները պատվիրակվել են Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 54-րդ հոդվածով, պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 13-րդ հոդվածներով, հարկային օրենսգրքի 401-րդ և 447-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-րդ, 60-րդ հոդվածներով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քաղաքացի Անահիտ Հարութիկի Սարգսյանից հոգուտ Երևան համայնքի բյուջեի գանձել 106.855 ՀՀ դրամ, որից 67.583 ՀՀ դրամը /2009 թվականից մինչև 2015 թվականը, 2020 թվականը/՝ որպես վճարման ենթակա գույքահարկի գումարի ապառք, 24.973 ՀՀ դրամը /2008 թվականից մինչև 2016 թվականը, 2020 թվականը/՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը:



ԿՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ